

փառիագանօք ետ գրել զսա ի հալալ ընչիցն
 եւ ի արդար վաստակոցն, ի վայելումն ան-
 ձին իւրոյ եւ ի յիշատակ հոգոյ, զոր տէր
 Աստուած բարով վայելել տացէ նմա եւ ընդ
 երկայն աւուրս. ամէն, եղիցի: Ով սուրբ
 ընթերցողք... սխալանաց եւ խոչորութեան
 գրիս չի մեղադրէք, զի խիստ թախձեալ,
 անձամբ, տրտում հոգով եւ տխուր սրտիւ
 գրեցի, ի նեղ եւ ի դառն վշտաշատ ժամա-
 նակիս, զի ամենայն կողմանց եւ ամենայն
 ուստէք պատեալ պաշարեալ էին զմեւք
 թշնամիք եւ շատ տառապանք, այլ եւ սովք,
 սրածութիւնք, սասանութիւնք եւ ազգի ազգի
 արհաւիրք եւ մահ տարաժամք: Զի յարեւ-
 մրտից կուսէ անհաւատ ուրացողն որ կոչի
 Շովէտ, մեր երկիրս մտեալ՝ զմեծամեծ քա-
 ղաքս եւ անառիկ բերդս էառ, գիւղս եւ ա-
 դարակս եւ աւանս, եւ յոյժ փարթամեցաւ
 աւերելով, ապականելով գերկիրս. զի չորս
 ամ հրկիղէր, յափշտակէր եւ ամայի դար-
 ձուցանէր, մինչ զի ոչ եթող բնաւ շինութիւն,
 մինչ զի մեծատունք եւ պարոնայք մուրացիկ
 դարձան եւ առաւել հարկապահանջութենէն
 ի սպառ կորեան եւ ի սովոյ սատակեցան եւ
 ջնջեցան: Այլ եւ հիւսիսային կողմանէ ազգն
 նետողաց զազիր եւ գարչելի պեղծ թա-
 թարքն մտեալ աշխարհս մեր, բազում եւ
 անթիւ զօրօք յովով վնաս գործեցին եւ շատ
 գերելով սպանանելով, քանդելով, աւերելով
 եւ այրելով զգիւղս եւ զքաղաքս եւ բազում